

ԶԱՐԻՆԵ ՍԱՌԱԶՅԱՆ

Բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ
ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվ. գրականության ինստիտուտ
zsarajyan@mail.ru

ORCID iD: 0009-0005-4103-2492

DOI: 10.54503/978-5-8080-1587-6-265

ԱԶԳԱՅԻՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԱՐՁԱԳԱՆՔԸ ԱՎԵՏԻՔ ԻՍԱՀԱԿՅԱՆԻ ՆԱՄԱԿՆԵՐՈՒՄ

Բանալի բառեր - Ավետիք Իսահակյան, նամակ, ազգային խնդիր, Հայաստան, հայ, գրականություն:

Ամփոփում

Հոդվածում ուսումնասիրվում է Ավետիք Իսահակյանի նամակագրությունը՝ ազգային խնդիրների, մասնավորապես՝ Հայոց ցեղասպանության, հայրենազրկման, Հայաստանի քաղաքական ճակատագրի, Արցախի, պատմական արդարության վերականգնման հարցերում նրա դիրքորոշման ու մտորումների համատեքստում: Նամակները ներկայացվում են որպես արժեքավոր փաստաթղթեր, որոնցում Իսահակյանն արտահայտում է ոչ միայն իր սերնդի պատմաքաղաքական ապրումները, իրավիճակը, այլև առաջարկում է ազգային խնդիրների լուծման ուղիներ:

Ուսումնասիրության նպատակն է վերհանել և վերլուծել Իսահակյանի նամակներում տեղ գտած ազգային թեմաները՝ առանձնացնելով հատկապես այն հատվածները, որոնք առնչվում են Ցեղասպանությանը, հայության ճակատագրին, Արցախում տեղի ունեցած պատմական իրադարձություններին և առհասարակ Հայաստանի ճակատագրին: Հոդվածն արդիական է հատկապես ներկայիս աշխարհաքաղաքական զարգացումների իրավիճակում և ազգային ու պետական գոյաբանական մարտահրավերների համատեքստում:

Գիտական նորույթն այն է, որ հոդվածը վերաբերում է Իսահակյանի նամակները գաղափարական տեսանկյունից՝ դիտարկելով այն որպես ազգային գոյության և զարգացման ծրագրի կոնցեպտուալ նախահիմք: Առաջարկվում է Իսահակյանի նամակներն ու հուշերը վերլուծել որպես քաղաքագիտական և մշակութաբանական աղբյուրներ:

Հոդվածի խնդիրներից է բացահայտել, թե ինչպես է Իսահակյանի նամակագրական ժառանգությունն արձագանքում հայ ազգային խնդիրներին անցյալում և ներկայում:

Կիրառվել է բովանդակային վերլուծության և հերմենևտիկական համադրություն՝ տեքստերի միջոցով Իսահակյանի աշխարհայացքի բացահայտման, քաղաքական դիրքորոշումներն ըմբռնելու նպատակով:

Իսահակյանի նամակները դիտարկվում են ոչ միայն որպես գրական-կենսագրական նյութ, այլ նաև որպես ազգային պայքարի գաղափարական վավերագրեր, որոնք առայսօր պահպանում են իրենց կարևորությունն ու ուղենիշային դերակատարությունը:

ZARINE SARAJYAN

PhD in Philology, Associate Professor

Institute of Literature after M. Abeghyan of the NAS RA

zsarajyan@mail.ru

ORCID iD: 0009-0005-4103-2492

REFLECTION OF NATIONAL ISSUES IN AVETIK ISAHAKYAN'S LETTERS

Keywords: Avetik Isahakyan, letter, national issue, Armenia, Armenian, literature.

Abstract

This article examines the epistolary legacy of Avetik Isahakyan in the context of national issues, particularly the Armenian Genocide, the loss of the homeland, the political fate of Armenia, the question of Artsakh, and the restoration of historical justice. Isahakyan's letters are presented as valuable documents in which he expresses not only the political and historical concerns of his generation and time but also proposes possible solutions to national problems.

The aim of the study is to identify and analyze the national themes found in Isahakyan's letters, with special emphasis on passages related to the Genocide, the fate of Western Armenians, the historical events in Artsakh, and the overall destiny of Armenia. The relevance of the article is especially

pronounced in light of current geopolitical developments and the existential challenges facing the Armenian state and nation.

The scientific novelty of the article lies in the re-evaluation of Avetik Isahakyan's letters from an ideological perspective, viewing them as a conceptual foundation for a program of national existence and development. It is proposed to analyze Isahakyan's letters and memoirs as sources for political science and cultural studies.

One of the article's objectives is to reveal how Isahakyan's epistolary legacy responds to Armenian national issues in both the past and the present.

The study applies content analysis and hermeneutic comparison in order to uncover Isahakyan's worldview and interpret his political positions through the texts.

Isahakyan's letters are interpreted not only as literary and biographical material but also as ideological records of national struggle, which to this day retain their importance and guiding role in understanding both the historical and contemporary Armenian experience.

ЗАРИНЕ САРАДЖЯН

*Кандидат филологических наук, доцент
Институт литературы имени М. Абега, НАН РА*

zsarajyan@mail.ru

ORCID iD: 0009-0005-4103-2492

ОТРАЖЕНИЕ НАЦИОНАЛЬНЫХ ПРОБЛЕМ В ПИСЬМАХ АВЕТИКА ИСААКЯНА

Ключевые слова: Аветик Исаакян, письмо, национальный вопрос, Армения, армянин, литература.

Аннотация

В статье исследуется эпистолярное наследие Аветика Исаакяна в контексте национальных проблем, в частности Геноцида армян, утраты родины, политической судьбы Армении, вопроса Арцаха и восстановления исторической справедливости. Письма Исаакяна рассматриваются

как ценные документы, в которых он выражает не только политико-исторические переживания своего поколения и времени, но и предлагает пути решения национальных проблем.

Цель исследования — выявить и проанализировать национальные мотивы, зафиксированные в письмах Исаакяна, с особым акцентом на те фрагменты, которые касаются Геноцида, судьбы армян, исторических событий в Арцахе и в целом будущего Армении. Актуальность статьи особенно велика в свете современных геополитических процессов и экзистенциальных вызовов, стоящих перед армянским государством и нацией.

Научная новизна статьи заключается в том, что в ней письма Аветика Исаакяна переосмысливаются с идейной точки зрения - как концептуальная основа программы национального существования и развития. Предлагается рассматривать письма и мемуары Исаакяна как источники политологических и культурологических исследований.

Одна из задач статьи - выявить, как эпистолярное наследие Исаакяна откликается на армянские национальные проблемы в прошлом и настоящем.

Применены методы контент-анализа и герменевтического сопоставления с целью раскрытия мировоззрения Исаакяна и понимания его политических позиций через тексты.

Письма Исаакяна интерпретируются не только как литературно-биографический материал, но и как идейные документы национальной борьбы, которые до сих пор сохраняют свою значимость и направляющую роль в осмыслении исторического и современного армянского опыта.

Ներածություն

Հայ գրականությունն ազգային ու համամարդկային արժեքներով, բազմաժանր, բազմաոճ ու բազմաթեմա ամբողջականությամբ խտացնում է նաև ազգային ճակատագրի պատմությունը: Այդ պատմության մեջ բացառիկ է Ավետիք Իսահակյանի դերը: Նա ոչ միայն բանաստեղծ է, արձակագիր և մտածող, այլև ազգային ցավի զգայուն արձագանքող և տարեգիր: Նրա ստեղծագործական և անձնական կյանքում առանցքային դեր և նշանակություն ունեցան ոչ միայն մշակութային և հոգևոր արժեքները, այլև ազգի, ազգային տարածքի ու

ինքնության պահպանման խնդիրները, որոնք վավերագրության ուժով արտացոլվում և փաստարկվում են նրա նամակագրության մեջ:

Նամականին՝ կարևոր վավերագրություն

Գրականագիտության հերմենևտիկական դաշտում էպիստոլյար ժանրը կարևոր միջոց է տեքստի վերլուծության համատեքստային մակարդակներում: Գրական տեքստի հարաբերությունը համատեքստորեն զուգադրելի փաստաթղթերի հետ՝ լինի դա իրական նամակագրություն, հեղինակային օրագրեր կամ պատմական աղբյուրներ, հաճախ նոր մեկնաբանման հնարավորություն է ստեղծում: Այդ մեթոդը ոչ միայն խորացնում է տեքստի ընկալումը, այլև ընդլայնում նրա իմաստաբանական նշանակության դաշտը՝ հնարավորություն ընձեռելով առավել լայն ու խորքային պատկերացում կազմելու գրողի աշխարհայացքի, քաղաքական, հասարակական, սոցիալական, մշակութաբանական հայացքների, ըմբռնումների, ինչպես նաև ժամանակաշրջանի խնդիրների մասին: Էպիստոլյար ժանրի հերմենևտիկական մեծ նշանակությունն ընդգծում է նաև գրականագետ Օ. Տուրիշևան (Տուրիշևա: 2017, 248):

Վերոնշյալի համատեքստում առանձնակի կարևորություն են ներկայացնում Ավետիք Իսահակյանի նամակները, որոնք, բացահայտում ու նոր լույս են սփռում ոչ միայն ստեղծագործական աշխարհը, այլև գրողի աշխարհայացքը, ժամանակի տագնապները, օրախնդիր լուծումները հասկանալու հարցերում՝ նամականին դիտարկելով որպես ազգային խնդիրների արձագանք:

Գրողի նամականին գրական տեքստի հերմենևտիկական դաշտի ընդլայնման գործառույթային նշանակությամբ է դիտարկվում նաև Ավետիք Իսահակյանի պարագայում: Այս առումով բնորոշ է գրականագետ Ավիկ Իսահակյանի այն դիտարկումը, ըստ որի՝ նամակների շնորհիվ բացահայտվում են ինչպես Վարպետի հայրենյաց աշխարհը, այնպես էլ նրա ստեղծագործական աշխարհը: «Նամակը ո՛չ վեպ է, ո՛չ պոեմ, ո՛չ պատմվածք և ո՛չ էլ բանաստեղծություն,- Ավետիք Իսահակյանի ԵԼԺ-ի 14-րդ հատորի «Երկու քարի արանքում» խորագրով վերջաբանում նկատում է Ավիկ Իսահակյանը,- բայց նամա-

կը Իսահակյանի ձեռքի տակ դառնում է այն բանալին, որ թույլ է տալիս ըմբռնել նրա վիթխարի ստեղծագործության ներքին լիցքերը, որ թույլ է տալիս հասկանալ մեծ Վարպետի կյանքի պատմությունը... Նամակը ինքնախոստովանություն է և օգնում է ստեղծել հեղինակի ինքնադիմանկարը» (Իսահակյան Ավ., 2021: 932):

Դեռ ուսանողական տարիներից նրա հոգսաշատ ու անհանգիստ կյանքի տարեգրությունն աշխարհագրական տարբեր վայրերում էր կերտվում: Այդ է պատճառը, որ Իսահակյանի նամակների աշխարհագրական հասցեները լայն ընդգրկում ունեն՝ Թիֆլիս, Բաքու, Ռոստով, Օդեսա, եվրոպական երկրներ՝ Վիեննա, Փարիզ, Ժնև, Ցյուրիխ, Վենետիկ, Սուրբ Ղազար կղզի... Նա գրել է նամակներ թե՛ բանտից, թե՛ աքսորից, թե՛ վտարանդիության հասցեներից: Օտար երկրների փոստային հասցեներից գրված նրա նամակները որքան էլ ունեցել են տարբեր ազգության հասցեատերեր, ժամանակի ամենաազդեցիկ անհատականություններ ու գործիչներ, առաջին հերթին նրա ամենակարևոր հասցեատերը եղել է հայը՝ հայությունը, իսկ արձարժված կարևոր գաղափարը՝ հանուն Հայաստանի. Հայոց ցեղասպանություն, գաղթական դարձած հայություն, Հայաստանի պատմական հողերի բռնազավթում, Առաջին հանրապետության անկում, բոլշևիկաքեմալական համագործակցություն, Արցախի կորստի ահազանգ՝ այս և ազգային օրախնդիր այլ հարցեր դառնում են Իսահակյանի նամակների ու մտահոգությունների առանցքը:

Անդրադառնալով նրա նամակներին՝ բազմիցս է շեշտվել, որ ազգային-ազատագրական պայքարը, Հայկական հարցը և, առհասարակ, հայության խնդիրները մշտապես եղել են Վարպետի մտածումների կիզակետում:

Նրա հայացքներն ու մտածողության խորությունը, ազգային հարցերի շուրջ դատողություններն ու գաղափարական համոզմունքները հատկապես բացահայտվում են 20-րդ դարի այնպիսի անվանի դեմքերի հետ ունեցած նամակագրական էջերից, ինչպիսիք են Քրիստափոր Միքայելյանը, Ավետիս Ահարոնյանը, Սիմոն Վրացյանը, Ռուբեն Դարբինյանը, Վահան Նավասարդյանը, Համո Օհանջանյանը,

Նիկոլ Աղբալյանը, Վարդգես Ահարոնյանը, Հովհաննես Թումանյանը, Մարտիրոս Սարյանը և ուրիշներ:

Խորհրդային Հայաստանում հայտնի պատճառներով՝ գրաքննություն (ցենզուրա), ԽՍՀՄ բռնաճնշումներ և այլն, 1930-ականների երկրորդ կեսից Իսահակյանի նամակներում ազգային թեմաները տեղի են տալիս այլ հարցերի: Այս մասին փաստում է նաև Ավիկ Իսահակյանը. «Իսահակյանի Նամականին 1930-ական թթ. երկրորդ կեսից հորդառատ գետից վերածվեց վտակի, զորեղ ազգային թեմաներին փոխարինելու եկան երկրորդական նշանակություն ունեցող հարցեր, ըստ էության շրջապատի ամենօրյա խնդիրներ, գրական կյանքի ամենօրյալի հոգսեր, տարբեր կարիքավոր մարդկանց անվերջանալի դիմումներ և դրանց պատասխաններ... Հասցեատերերը նոսրանում էին: Նամակները չունեին նախկին զորեղությունն ու հնչեղությունը: Եվ նրա հասցեատերերում այլևս չկային Հայրենիքի ճակատագիր ուրշող անհատներ: Ասենք, որ այդպիսի անհատներ արդեն գոյություն չունեին ողջ Հայաստանում, նրանց փոխարինելու էին եկել խորհրդային պաշտոնյաներ...» (Իսահակյան Ավ., 2021: 1041-1042): Ավիկ Իսահակյանը հավելում է նաև մի ուշագրավ հանգամանք. բանաստեղծն իր կյանքի վերջին 30 տարիներին ամենաանկեղծ նամակագրությունն ունեցել է կնոջ և որդու՝ Սոֆյա և Վիգեն Իսահակյանների հետ:

Պետք է ընդգծել նաև, որ Ավետիք Իսահակյանն ինքն էլ մեծ կարևորություն էր տալիս նամակի ժանրին, ինչը փաստում են նաև նրա ժամանակակիցներն ու կենսագիրները. «Թե՛ որպես հարգանքի նշան, թե՛ որպես թանկագին մասունք, Իսահակյանն անխտիր պահպանել է իր ընկերների գրած նամակները, ամենավաղ՝ ուսման էջմիածինյան շրջանից մինչև ծերության օրերը: Ի՞նչ խոսք, որ դրանք անգնահատելի արժեք ունեն բանաստեղծի կենսագրի համար: Շատ և շատ հարցերում բացահայտվում են իրողություններ՝ կապված ոչ միայն Իսահակյանի, այլև տվյալ ժամանակաշրջանի պատմաքաղաքական դեպքերի ու դեմքերի անցուդարձերի հետ» (Իսահակյան Ավիկ, 2000: 349):

Ավետիք Իսահակյանի ստեղծագործական անհատականությունը երբեք ամբողջությամբ չէր տեղավորվում միայն բանաստեղծա-

կան կամ նույնիսկ պոեմների, արձակի շրջանակներում, այլև դուրս էր հորդում դրա սահմաններից: Ա. Ինճիկյանն իր դիտարկումներում այս առումով նշում է, որ «Վարպետի հուժկու միտքն ու զգացմունքը չեն տեղավորվել քնարական նուրբ ձևերի, նույնիսկ «Աբու-Լալա-Մահարու» մեջ: Դեռևս աշակերտական նստարանից՝ Իսահակյանը ունեցել է մտքի այնպիսի ժայթքումներ, որոնք արտահայտել չափածոյի միջոցով հնարավոր չէր: Այդ ինքն էլ գիտեր, որ երբեմն իր հախուռն մտքերը հանձնում էր ծոցատետրերին, իսկ երբեմն էլ փորձում էր գրել «Ուստա Կարո» լայնապլան վեպը» (Ինճիկյան, 1977: 100): Իրականում Իսահակյանի ստեղծագործական «հախուռնությունը» և մտքի ժայթքուն հոսքը լավագույնս արտահայտություն են գտել ոչ միայն պոեզիայում ու գեղարվեստական արձակում, այլև, գուցե առավել ազատորեն, նրա նամակագրության մեջ:

Նամակները դառնում են այն տարածությունը, որտեղ Իսահակյանը ոչ միայն ազատվում է գրական ձևերի պարտադրանքից, այլև առանց պայմանականությունների ներկայացնում մտածողության ներքին լարումներն ու էմոցիոնալ դրսևորումները: Իրադարձությունների վերլուծությունը, քաղաքական գնահատականները, ազգային խնդիրների շուրջ հնչող դիտարկումները երբեմն այնպիսի ինտենսիվություն ու անմիջականություն ունեն նամակներում, որ իրականում ընդգծում են հենց Ինճիկյանի բնութագրած «հախուռնության ու անկաշկանդ հոսքի» դրսևորումները:

Ազգային ճակատագիրը՝ նամակներում

Հայկական հարցը, որը հայ ժողովրդի պատմության ամենացավոտ էջերից է, առանցքային տեղ է զբաղեցնում Ավետիք Իսահակյանի նամակներում: Իր նամակագրության մեջ Իսահակյանը ոչ միայն արձագանքում է ազգային ցավերին և մտահոգություններին, այլև փաստագրում է այն իրադարձությունները, որոնք հանգեցրին ազգային ողբերգության: Նա կատարում է խորքային վերլուծություններ, քաղաքական գնահատումներ և կանխատեսումներ՝ միաժամանակ առաջարկելով լուծման հնարավոր ուղիներ: Իսահակյանը հատուկ ընդգծում է նաև միջազգային հանրության անտարբերությունը՝

դիտարկելով այն որպես հայ ժողովրդի ճակատագրական կորուստների պատճառներից մեկը:

Ազգային ճակատագիրը, Հայկական հարցը Իսահակյանին հուզել են դեռ ուսանողական տարիներից՝ դառնալով նրա ոչ միայն ստեղծագործական աշխարհի շարժիչ ուժը, այլև հասարակական-քաղաքական գործունեության առանցքը: Հայաստանի համար բախտորոշ մի շարք իրադարձությունների ժամանակակիցը լինելով՝ Իսահակյանն անցել է մի շարք բարդ իրավիճակների ու իրադարձությունների միջով, տառապել որպես իր ազգի ազնիվ ու նվիրյալ զավակ՝ հույսը չկորցնելով իր ժողովրդի ապագայի հանդեպ: Որքան էլ փաստերն ու նրա ներաշխարհը երբեմն մղել են լինելու հոռետես, նա իր տողերում միշտ հուսավառել է ընթերցողին՝ գիտակցելով գրողի տողի ապրեցնող ուժն ու կրելով այդ պատասխանատվությունը:

1913 թ. հունվարի 5-ին նա հուսավառված նամակ է գրում Սիմոն Վրացյանին, որտեղ տեսնում ենք նրա լավատեսությունը, սպասումը՝ կապված Հայկական հարցի լուծման հետ. «Հայկական հարցը զարթնել է. ո՞վ կարող է ուրիշ բաներով զբաղվել. ես հույսեր ունեմ. ինչո՞ւ, ի՞նչ հիման վրա - չեմ կարող ասել. միայն հույս ունեմ: Այ թե մի բան լիներ. ինչ լավ կլիներ» (Իսահակյան Ավ., 2020: 216):

Այս հույսերը, սակայն, հետագայում տեղի են տալիս ազգային և համաշխարհային ողբերգական իրադարձությունների պատճառով: Առաջին աշխարհամարտը, 1915 թ. Ցեղասպանությունը, հայ բնակչության զանգվածային կոտորածներն ու տարագրությունը հուսախաբության և խոր տառապանքների պատճառ են դառնում Իսահակյանի համար: Նրա նամակներում աստիճանաբար տեղ է գրավում հուսահատված, բայց պայքարող մտավորականի ձայնը՝ արդարության որոնման մղումով: Եթե 1913-ին նա գրում էր՝ «միայն հույս ունեմ», ապա հետագա նամակներում ավելի հաճախ է արտահայտում դառնություն, դժգոհություն, ցավ: Հայկական հարցի չլուծված մնալը, մեծ տերությունների շահախնդիր և անտարբեր կեցվածքը նրա համար վերածվում են քաղաքական և բարոյական մեծագույն աղետի:

1916 թվականի ապրիլի 2-ին Ժնևից Գարեգին Լևոնյանին ուղղված նամակում Ավետիք Իսահակյանն արտահայտում է իր խոր հու-

սահատությունն ու սարսափը Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում տեղի ունեցող արյունալի իրադարձությունների կապակցությամբ: Նա իր ապրումները նկարագրում է չափազանց լարված և հուզական տոնով՝ նշելով. «Այս ահավոր, սարսափելի պատերազմի ընթացքում ուղղակի վայրենի դարումն ենք ապրում: Նզովված, հազար անգամ նզովված Գերմանիան դարերի քաղաքակրթությունը կործանեց: Օ՛, ի՛նչ սարսափելի օրեր եմ անցրել և անցնում եմ: Այս ի՛նչ արյունոտ խելագարություն է - սպանություն, սպանություն, արյո՛ւն, արյո՛ւն, արյո՛ւն» (Իսահակյան Ավ., 2020: 264):

Նույն նամակում Իսահակյանը դառնությամբ արձանագրում է Հայկական հարցի կապակցությամբ արդեն կատարված ողբերգությունը. «Հայաստան այլևս չկա, բառացի ասած՝ Թուրքիայի հայերը ոչնչացան»: Նրա համոզմամբ, եթե Թուրքիան որպես պետություն արդեն փլուզման ճանապարհին էր, ապա «գոնե այդ է մխիթարանքը», մինչդեռ Գերմանիան դեռ շարունակում էր առաջ մղել պատերազմի մղծավանջը: Նա կտրուկ և անողոր արտահայտություններով է բնութագրում գերմանական կայսրությանը:

Այնուամենայնիվ, ամբողջական հուսահատության մեջ Իսահակյանը պահպանում է որոշ չափով հավատ դաշնակից պետությունների հաղթանակի նկատմամբ: Իսահակյանի նամակն առանձնանում է նաև իր հայացքով դեպի ռուսական բանակի դերը հայկական տարածքներում. «Ամբողջ հոգով ու սրտով ռուս քաջ զինվորների հետ եմ Հայոց լեռներում: Նրանք մեր վրեժը լուծում են: Դարերի ընթացքում ռուսն է թուրքի գլուխը ջարդել և ազգեր ազատել - Հունաստան, Ռումանիա, Սերբիա և երախտամոռ Բուլգարիա. այսօր հերթը հայերիս հասավ» (Իսահակյան Ավ., 2020: 264):

Նամակը կարևոր փաստ է, որն արտահայտում է Յեղասպանության ու համաշխարհային պատերազմի մթնոլորտում ձևավորված Իսահակյանի գաղափարական համոզմունքները:

Իսահակյանն իր նամակներում բազմիցս արտահայտել է նաև իր վերաբերմունքը եվրոպական տերությունների պասիվ դիրքորոշման հանդեպ, հատկապես՝ փոքր ազգերի իրավունքների պաշտպանության դեպքում՝ քննադատելով քաղաքական շահախնդրության

դրսևորումները: Նման դիրքորոշումը հաճախ է արտահայտվում Եվրոպայում եղած ժամանակ գրված նրա նամակներում, երբ ակտիվորեն հետևում էր միջազգային քննարկումներին՝ կապված Հայկական հարցի հետ:

1919 թ. մայիսի 30-ին Ավետիք Իսահակյանը Ժնևից նամակ է գրում Համո Օհանջանյանին, որտեղ արտահայտում է իր անհանգստությունն ու վրդովմունքը հայ ժողովրդի անորոշ քաղաքական վիճակի շուրջ: Նա նշում է, որ շատ է տանջվում մեր ժողովրդի անորոշ վիճակի համար, քանի որ միջազգային ասպարեզում Հայաստանի հետ կապված որոշումները կայացվում են շահադիտական շարժառիթներով:

Նամակում Իսահակյանը վերլուծում է դաշնակից պետությունների հակասական քաղաքականությունը՝ քննադատելով նրանց երկդիմի վարքագիծը. «Գրում ես, որ շատ վրդովված եմ. ինչպե՞ս չվրդովվել, երբ տեսնում ես մի կողմից Դաշնակիցները ուզում են (կամ ցույց են տալիս, թե ուզում են) հայությունը ազատել թյուրքերի ճանկից, մյուս կողմից 3-400.000 ամենաընտիր հայերի դնում են թյուրքի լծի տակ. իրենց աչքի առջև, իրենց անտարբերությամբ, կոտորեցին Բագուն, ջնջեցին Նուխիի և Արեշի հայությունը, այդ բավական չէ, նոր կատաստրոֆների դուռ են բանում այդ սրիկա, էգոիստ ավազակները, իրենց շահերի համար. որովհետև ուզում են Կովկասը ունենալ, դրա համար իրենց հովանավորած վրացի և թյուրք ժողովուրդների սահմանները մեծացնում են, գրավելով Լոռիի հանքերով հարուստ գավառը, Ղարաբաղը, հերոսական Ղարաբաղը իր հարուստ հանքերով. ձգտում են Նոր Բայազետի հյուսիսային ափերը գրավել, ուր հարուստ, ճոխ են մանգանեզի, խրոմի, երկաթի, գրաֆիթի, անագի հանքերով, իսկ Գետաբե՞կը, որ հայ շրջանի մեջ է» (Իսահակյան Ավ., 2020: 322):

Այս նամակում Իսահակյանի քննադատության թիրախում են հատկապես Անգլիան և Ֆրանսիան, որոնք, ըստ նրա, առաջնորդվում են զուտ նյութական շահերով, մասնավորապես՝ Կովկասի հանքային հարուստ գավառների նկատմամբ տաժած հետաքրքրություն-

ներով: «Անգլիա, անկուշտ, անհագ, հիպոկրիտ, վամբիր», - գրում է նա (Իսահակյան Ավ., 2020: 322):

Նույն տրամաբանության մեջ նա անդրադառնում է նաև ֆրանսիական նկրտումներին, որոնք ուղղված էին Դիարբեքիի և Արդա-նա-Մատենի «կլասիկ հանքերին»՝ կրկին հայ ժողովրդի տնտեսական հիմքերը թուլացնելու հեռահար նպատակով: Ըստ Իսահակյանի՝ դաշնակից պետությունները փորձում են հայերին զրկել բնական ռեսուրսներից՝ «որ իրենց թյուրքոֆիլ բուրժուաների գերին դառնանք» (Իսահակյան Ավ., 2020: 322):

Իսահակյանը նամակի վերջում ընդգծում է հայ ժողովրդի իրավունքների արդարացիությունը. «Մենք իրավունք ունենք լիովի մեր հողերի վրա, որովհետև մենք նրանցից շատ ենք կռվել, շատ ենք զոհվել. մենք կռվել ենք մեր հայրենիքի համար, իրենք - իրենց գրպանի համար»:

Այս նամակը փաստում է ոչ միայն Իսահակյանի քաղաքական հայացքները, այլև նրա հստակ գիտակցումն ու գնահատականը՝ միջազգային խաղացողների շահերի և հայության ռեսուրսային անկախության կարևորության վերաբերյալ:

Բանաստեղծի որդին՝ Վիգեն Իսահակյանը, «Հայրս» գրքում պատմում է, որ Ժնևում գտնվելու տարիներին Իսահակյանների բնակարանը վերածվել էր մի յուրատեսակ հոգևոր ապաստանի վտարանդի դարձած հայերի համար: «Ժնևի մեր տունը դարձել էր այստեղ ապաստանած հայերի համար մի տեսակ հոգեկան կենտրոն», որտեղ օրն սկսվում էր այցերով: Տարբեր ծանոթներ ու անծանոթներ գալիս էին՝ «մի խորհուրդ ստանալու, մի մխիթարական խոսք լսելու» (Իսահակյան Վ., 2000: 53):

Ժնևը այդ տարիներին եղել է նաև հայ և ռուս վտարանդիության գործունե կենտրոն: Այստեղ էին Ավետիս Ահարոնյանը, Սիամանթոն, Պոռշ Պոռշյանը, ինչպես նաև Լևոն Շանթը, որը բնակվում էր Լոզանում: Այդ շրջապատում աչքի էին ընկնում նաև գերությունից նոր ազատված հայ զինվորները, որոնցից մի քանիսը՝ Հայ հեղափոխական դաշնակցությանը հարող հայրենասերներ, ակտիվորեն մասնակցում էին Թալեաթ փաշայի սպանության նախապատրաստական

աշխատանքներին: Վիգեն Իսահակյանի հուշերը փաստում են, որ Ցեղասպանության կազմակերպիչներից վրեժխնդիր լինելու «Նեմե-սիս» գործողությանը ևս Իսահակյանը մեծ դերակատարում է ունեցել: Իսահակյանին հանձնարարված էր կարևոր ու վտանգավոր մի գործ՝ հավաքել տեղեկություններ Թալեաթի տեղաշարժերի, ծածկանունների վերաբերյալ: Նրա որդու վկայությամբ՝ Թալեաթը «զգում էր, որ արդար հատուցման ժամը գալու է, և ընդհատակ էր անցել» (Իսահակյան Վ., 2000: 53):

Գրեթե այս նույն ժամանակաշրջանում Իսահակյանի մտահոգությունները խորանում են՝ կապված Հայաստանի առաջին հանրապետության վտանգված անկախության և համահայկական քաղաքական ճակատագրի անորոշության հետ: Այդ մասին վկայում են նրա՝ 1920 թ. գրած նամակները, մասնավորապես՝ Սիմոն Հակոբյանին հասցեագրվածները:

1920 թ. մայիսի 5-ին Սիմոն Հակոբյանին ուղղված նամակում Ավետիք Իսահակյանն արձագանքում է Հայաստանի Հանրապետության շուրջ ձևավորված քաղաքական փոփոխություններին: «Հայաստանը ներկայումս այն վտանգի մեջն է, ինչ որ էր 1918. այն ժամանակ ռուսները հեռանում էին մեզնից, իբրև բարեկամ, հիմա գալիս են իբրև թշնամի: Վաղը տապալված կլինի Երեւանի Հանրապետությունը, և դաշնակցությունը խորտակված, և օրենքից դուրս. կորավ միացյալ Հայաստան, բոլշևիկյան Հայաստանը մասն է կազմելու Սովետական Ռուսաստանի: Թյուրքիո Հայաստանի հարցը բաժանվեց և մնաց առանձին, բայց վտանգված...», - ահազանգում է նա՝ արտահայտելով խոր մտահոգություն՝ փաստացի կանխատեսելով Հայաստանի խորհրդայնացումը (Իսահակյան Ավ., 2020: 346):

Նամակի ամենախորքային ուղերձը, սակայն, վերաբերում է ներքին բաժանմանը և քաղաքական պառակտմանը. «Մենք, որ բոլշևիկների հետ ձեռք-ձեռքի կռվել ենք, այսօր թշնամի ենք: Եվ ամենամեծ թշնամին հայ բոլշևիզմն է, որ կրքից կուրացած այժմ պիտի սրի անցնի՝ ինչ որ դաշնակցական-ազգային-հայկական է...» (Իսահակյան Ավ., 2020: 346):

Իսահակյանի այս նամակն արձանագրում է ժամանակաշրջանի քաղաքական խոր ճգնաժամը. նա գիտակցում է իր ժողովրդի փլուզվող պետականության անխուսափելիությունը՝ միաժամանակ ըմբռնելով արտաքին աշխարհաքաղաքական ճնշումները և ներքին գաղափարական պառակտումները:

Հետագա նամակներում, իհարկե, նկատվում է Իսահակյանի վերաբերմունքի փոփոխությունը Սովետական միության հանդեպ՝ դրական արձագանքելով Խորհրդային Հայաստանի տնտեսական, սոցիալական և այլ ոլորտների զարգացմանը: Այլ կերպ պատկերացնելն անգամ հնարավոր չէ, մանավանդ, որ նա 1930-ական թթ. երկրորդ կեսին վերադարձավ Սովետական Հայաստան և մինչև կյանքի վերջը ապրեց հայրենիքում՝ իր ժողովրդի հետ կիսելով և՛ դառնությունը, և՛ ուրախությունը՝ հարստացնելով հայ գրականության էջերը:

Արցախ. զգացմունք, պատմաքաղաքական ներկայություն, վերլուծություն, կանխատեսում

Ազգային տարածքի, պետականության ու ինքնության պահպանման խնդիրը մշտապես պահելով իր մտահոգությունների և գործունեության կենտրոնում՝ Վարպետը, բնականաբար, այդ խնդիրներից չէր կարող առանձնացնել Արցախը, որը նրա համար ազգային տարածքի ամենանուրբ ու կարևոր կետերից մեկն էր և նամակներում զբաղեցնում է առանձնահատուկ տեղ:

Արցախի հարցի վերաբերյալ Ավետիք Իսահակյանի մտահոգությունները, հորդորներն ու պատգամները, որոնք ուղղված են թե՛ ժամանակակիցներին, թե՛ գալիք սերունդներին, արդիական հնչեղություն ունեն: Ուսումնասիրելով նամակները՝ ակնհայտ է դառնում, որ Արցախը նրա ցավոտ մտահոգություններից էր, և որի շուրջ Վարպետը նաև առաջ է քաշում խնդրի լուծման ուղիներ: Նրա խոսքը, տվյալ պարագայում նամակների ուղերձները, ձեռք են բերում քաղաքական դիրքորոշում, գաղափարախոսություն, մտածողություն ձևավորող գործառնությամբ նշանակություն: Հարկ է ընդգծել նաև, որ այս գործառնությամբ բնորոշ է ոչ միայն նրա գրավոր խոսքին (խնդրո առարկա՝ էպիստոլյար ժառանգությանը), այլ նաև այդ հատկանիշով է բնութագրելի նրա բանավոր խոսքը տարբեր հանդիպումների, դա-

սախտությունների ժամանակ: Ահա դրա վկայություններից մեկը. Սիլվա Կապուտիկյանն իր հիշողություններում պատմում է, թե ինչպես էր դեռ պատանեկան տարիներին լսում Վարպետի խոսքերը Ղարաբաղի և Նախիջևանի մասին: Երբ պատանիներն սպասում էին Վարպետից լսելու Եվրոպայի մեծ քաղաքների մասին, Իսահակյանը պատմում էր Վանից, Անիից, Ղարաբաղից: «Ղարաբաղն ու Նախիջևանը իմ կյանքի մեջ մտան Ավետիք Իսահակյանի գրույցներից: Մինչ մենք, պիոներական փողկապի օղակից նոր դուրս եկած պատանիներս, տեսչում էինք Վարպետից լսել Փարիզի ու Վենետիկի մասին, Թումանյանի ու Չարենցի մասին, Վարպետն իր պատմելիքն ու խոսելիքը ուներ, և այդ խոսքերը Անին էր, Ղարսը, Վանը ու, մանավանդ, Ղարաբաղն ու Նախիջևանը», - գրում է Սիլվա Կապուտիկյանն իր «Էջեր փակ գգրոցներից» (Կապուտիկյան, 1997: 686) գրքում: Սա պատահական ընտրություն չէր: Իսահակյանը հավատում էր, որ ազգային ինքնությունն սկսվում է հայրենի հողից, հիշողությունից և դրանց հանդեպ սիրուց: Իսկ Արցախը նրա համար խորհրդանշ էր այդ ամենի, հայրենիք էր, ազգային մշակույթ և ինքնություն:

1919-ից սկսած՝ Իսահակյանը նամակներում հստակ արտահայտում է Արցախի նկատմամբ իր խոր մտահոգությունն ու տազնապը:

1919 թ. մայիսի 30-ին Համո Օհանջանյանին ուղղված նամակում նա զգուշացնում է Ղարաբաղը կորցնելու վտանգի մասին՝ վերլուծությամբ փաստարկելով իր մտահոգությունը. «Ձեզ մատաղ, ամեն բան արեք Ղարաբաղը, Լոռին չկորցնեք: Անկարելի է, և, վերջապես, ղարաբաղցուն չի կարելի ընկճել: Մելիքների որդիները նորեն ռուսներին կբերեն, թուրքերը չեն կարող նրանց տեր լինել... Երբեք»¹ (Ավետիսյան, 2016: 78):

Այս կոչը, հորդորը գալիս էր ոչ միայն զգացմունքային վերաբերմունքից, այլև ռազմավարական ու վերլուծական մտածողությունից, իրադարձությունների սթափ գնահատականից, ժամանակի,

¹ Ավետիք Իսահակյանի նամակներից մեջբերումներն արվել են Ավ. Իսահակյանի ԵԼԺ հ.13 և 14-ից, ինչպես նաև տե՛ս **Ավետիք Իսահակյանի նամակները**: Կազմեց Արփիկ Ավետիսյանը, Երևան, ԵՊՀ հրատ., 2016, 474 էջ: Ինչպես նաև ԲԱԳԻՆ, ԻԹ. տարի, 1990, թիվ 9-12: Բացառիկ թիվ՝ նուիրումս Արցախին:

նաև ապագայի աշխարհաքաղաքական իրավիճակի գիտակցումից: Ակնհայտ է, որ նա հասկանում էր՝ եթե Հայաստանը կորցնի Արցախը, ապա կկորցնի ոչ միայն մի տարածք, այլև ռազմավարական նշանակության դիրք, դիմադրելու հոգեբանություն, հաղթողի հավատ, պատմական ամբողջականության շարունակականություն:

Իսահակյանն Արցախը տեսնում էր որպես կենսական ուժի աղբյուր. այնտեղ էին հայոց մելիքական տան, հայկական ազատագրական պայքարի ոգիները: Նա շեշտում է, որ «ղարաբաղցուն չի կարելի ընկճել»՝ հավատալով, որ Արցախը միայն ֆիզիկական տարածք չէ, այլև ոգեղեն, որին չեն կարող տիրանալ օտարները: Սակայն դրա համար պետք է պատրաստ լինել պաշտպանելու Արցախը ոչ միայն զենքով, այլ նաև մտքով, խոսքով և, ամենակարևորը, գործով:

1920 թ. մարտի 24-ին Ժնևից Սիմոն Հակոբյանին գրում է. «Ուրեմն նորից Զանգեզուրի շուրջ պատերազմ: Անգլիան ուզում է անպատճառ ունենալ Զուլայի բերանը: Հնար չկա, կորած է թե՛ Ղարաբաղը, թե՛ Զանգեզուրը և թե՛ Նախիջևանը: Դուք հավատո՞ւմ եք Թյուրքահայաստանի ազատության: Ես դրան չեմ հավատում. հրաշք պիտի լինի, եթե ազատվի: Իտալիան անվերջ զինում է Մուստաֆա Քեմալին, Ֆրանսիան, գիտե՞ք՝ ինչ շուն է: Անգլիան էլ, մյուս կողմից, Ադրբեջանին է զինում. խաբում են մեզ: Բոլշևիկներից էլ հույս չկա, նրանք էլ պանթուրանիստ են դարձել: Շատ մոայլ եմ տեսնում գործերը: Պոլսի առումը գարանտի չէ, քանի որ ոչ ոք լուրջ չի մտածում Հայաստան շինել» (Ավետիսյան, 2016: 90):

Այսօրինակ նամակներում, թերևս, Վարպետը ժամանակի քաղաքական իրավիճակի հստակ վերլուծությամբ ահազանգում է գալիք կորուստների մասին՝ օր առաջ կանխատեսելով կատարվելիքը և գ-գուշացնելով ունեցածը պահելու, խնդրի լուծման ուղիները գտնելու և գործելու հրատապ անհրաժեշտությունը:

Այցելությունը Արցախ

Ավետիք Իսահակյանի այցը Արցախ պատմական երևույթ էր: Ինչպես փաստում է Վարպետի թոռը՝ գրականագետ Ավիկ Իսահակյանը, «Հայկական հարցի բնական մասը համարելով Ղարաբաղյան հարցը՝ Իսահակյանը 1948 թվին այցի գնաց հայրենի երկրի այդ ան-

կոտրում տարածքը: Եվ իր էությամբ, իր իմաստուն խոսքով հույս ու հավատ ներշնչեց Ղարաբաղի հերոսական ժողովրդին, չթողեց, որ մարի կանթեղը լույսի» (Իսահակյան Ավիկ, 2004: 164): Ադրբեջանի կազմում գտնվող Արցախ նա այցելեց արմատներով Բերդաշեն գյուղից Զաքարե Սուվարյանի ուղեկցությամբ (Կարապետյան, 2009: 11), որը նոր էր ներգաղթել ԱՄՆ-ից: Հայ խոսքի կարոտ Արցախի հայությունը Վարպետին ընդունում է ջերմությամբ ու ակնածանքով, հատկապես ուսանողությունը շրջապատում է նրան և սկսում հարցերի տարափը «Ուստա Կարոյի» և այլ հետաքրքրող թեմաների մասին: Հենց այդ այցի ընթացքում, սակայն, Իսահակյանը բախվում է իրականության մոայլ պատկերին: Շուշին՝ նրա կնոջ՝ Սոֆյայի հայրենի քաղաքը, ավերված էր, գերեզմանները՝ խեղված, իսկ ժողովուրդը՝ լուռ, տառապած, հոգնած, հուսահատ:

Վարպետը տեսավ ժողովուրդ, որ կտրված է մայր հայրենիքից՝ բառի ամենախոր իմաստով: «Դասագիրք չունեն», – գրել է նա: Ո՛չ թերթ, ո՛չ գիրք, ո՛չ կապ: Արցախը սովետական շրջանի քաղաքականության հետևանքով վերածվել էր մեկուսացված տարածքի, որտեղ հայի ինքնությունը պահելն արդեն պայքար էր: Խորհրդային տարիներին Հայաստանից Արցախ ուղևորությունը բացառիկ քայլ էր՝ լի ռիսկերով ու հետևանքներով: Վարպետի այցը իշխանությունների ուշադրության կենտրոնում էր, և նրա քայլերին անձամբ հետևում էին ադրբեջանական իշխանությունները: Եվ ամենամեծ հարվածը եղավ այն, որ իր այցից հետո ադրբեջանական իշխանություններն սկսեցին հետապնդել նրա ուղեկիցներին: Բոգդան Ջանյանը, որն այդ տարիներին ադրբեջանական լծի տակ հազիվ գոյությունը պահող Ղարաբաղի գրողների միավորման պատասխանատուն էր, և Զաքարե Սուվարյանը բանտարկվեցին, հետագայում աքսորվեցին Սիբիր՝ իբր «նացիոնալիզմի» մեղադրանքով (Կարապետյան, 2009: 11):

Այս ամենից հետո Վարպետը դառնացել է խորապես՝ ասելով. «Ուռքս ջարդվեր, ես իզուր եկա այդտեղ, գիտեի, որ կբանտարկեն...» (Կարապետյան, 2009: 11):

Բանաստեղծը թղթին է հանձնել ղարաբաղյան շրջագայությունից ստացած մոայլ տպավորությունները: Ահա դրանցից մի քանիսը.

«Ընդհանրացումներից մէկն էլ այն է, որ վայ թէ մի կնոջ, հայ դարաբաղցի կնոջ հարցնես, թէ ոնց ես, սկսում է լաց լինել եւ ասել իր կուրուստների մասին: Ղարաբաղում տուն չկայ, որ պատերազմի զոհ տուած չլինի: Գոնէ մի մարդ: Մայրեր կան երեք-չորս տղայ են կորցրել: Ուղղակի քամել են հայ ժողովրդին, քամել են...

Ղարաբաղը բացարձակ կտրուած է Հայաստանից՝ ո՛չ թերթ, ո՛չ գիրք: Դասագիրք չունեն հայերէն: Բաքու չեն տպում հայ դասագրքեր, նույնիսկ մայրենի լեզուի... Լեռնային Ղարաբաղի ատոնումիան բացարձակ սուտ բան է, նա Բաքուին ենթարկուած մի բան է: Աղբեջանը իշխում է ամէն բանի մեջ Ստեփանակերտ ոչ մի հայ գիրք չի տպում:

Մի ողորմելի թերթ:

Տեղական երիտասարդները վառում են, ուզում են արտահայտուել, ոչ մի հնար չկայ...

Մեռնենք էլ, չենք խառնուի իրար հետ՝ հայ, վրացի, թուրք տարբեր են, սոցիալիզմը չի կարող միացնել նրանց», - եզրահանգում է Վարպետը (Բագին, 1990: 33):

Արցախ այցից հետո սաստկացած բռնաճնշումները բնավ տեղիք չտվեցին գաղափարական նահանջի կամ հրաժարումի, ավելին՝ Վարպետը շարունակեց բարձրաձայնել Արցախի խնդրի մասին:

Վարպետի հնչեցրած կորստի ահազանգը, ցավոք, իրողություն է դարձել: Նրա նկարագրածից է՛լ ավելի ծանր իրավիճակում է Արցախը՝ հայաթափված, հայկական հետքը իսպառ վերացնելու վտանգի տակ... Կորցրածը վերագտնելու համար շատ կարևոր են նաև Ավետիք Իսահակյանի նամակների ուղերձները: Նրա հնչեցրած տազնապը, նախազգուշացումը և խնդիրների լուծման ուղիները, որ տեսնում էր ազգային ներքին համախմբման, արտաքին քաղաքականությունը հոգուտ ազգային ու պետական շահի ծառայեցնելու մեջ և հայրենիքի հանդեպ նրա սերը սերունդների համար դաս են կորցրածի, վերագտնելու և պահպանելու մասին:

Թերթելով Ավետիք Իսահակյանի ստեղծագործության էջերն ու նամակները՝ կարելի է փաստել, որ նա մեզ թողել է ոչ միայն գրականություն, այլև ազգային գոյության ինքնատիպ ծրագիր: Նրա նամակ-

ներն ու հուշագրությունը ներկայանում են որպես պատմաքաղաքական անցյալի հայելի, բայց նաև ապագայի յուրօրինակ քարտեզ: Այսօր, երբ Հայաստանը, ներքին և արտաքին մարտահրավերներով պայմանավորված, կանգնած է հերթական ճակատագրական շրջադարձի սահմանագծին, անհրաժեշտ է վերստին վերադառնալ Վարպետի գաղափարախոսական ժառանգությանը, որտեղ տրված են նաև ազգային խնդիրների լուծման ուղիներ, որոնք իրապես կարող են դառնալ ազգային գաղափարախոսության աղբյուր, ինչպես նաև ուղեցույց ինքնաճանաչման և ազգային գոյության ու պետականության ճանապարհը շարունակելու համար:

Եզրակացություն

Ավետիք Իսահակյանի նամակագրական ժառանգությունը հատկանշվում է որպես ազգային պատմության և քաղաքական մտքի ինքնատիպ վավերագրություն, որտեղ արձանագրված են ոչ միայն իր ժամանակաշրջանի ազգային ողբերգությունները, այլև դրանց պատճառները, հետևանքներն ու ազգային խնդիրների լուծման հնարավոր ուղիները:

Հայոց ցեղասպանության, Հայկական հարցի, Արցախի և Հայաստանի ճակատագրի հարցերը Իսահակյանի նամակներում ունեն առանցքային նշանակություն՝ հուզական խորությամբ ու քաղաքական գնահատականներով հագեցած: Նամակներում արտահայտվում են միաժամանակ և՛ հուսահատություն միջազգային անարդարության նկատմամբ, և՛ հավատ հայության դիմադրողականության ու արդարության հաղթանակի հանդեպ:

Նամակները՝ որպես գաղափարական վավերագրեր, հատում են անհատական շփման ձևաչափի սահմանները և դառնում ազգային մտածողության, պետականության արժեքորման և հասարակական գիտակցության, գաղափարախոսության ձևավորման կարևոր աղբյուրներ:

Իսահակյանի նամակներում տեղ գտած վերլուծությունները, կանխատեսումներն ու կոչերն ունեն ռազմավարական նշանակություն: Նրա դիրքորոշումները կարող են դառնալ ուղենիշ նաև ժամանակակից ընթերցողի, քաղաքագետի և մշակութաբանի համար:

Սովետական շրջանի քաղաքական պայմանները, որոնք հանգեցրին գրաքննության ու մտավոր դաշտի վերահսկման, զգալիորեն սահմանափակեցին Իսահակյանի ազատ խոսքի հնարավորությունները՝ փոխելով նամակագրության բովանդակությունը, հասցեատերերի կազմն ու աշխարհագրությունը:

Իսահակյանի նամակներն ընդգրկում են ոչ միայն իր սերնդի պատմական փորձը, այլև ձևավորում են ազգային հիշողություն, որի փոխանցումը նոր սերունդներին կարևոր է ինքնության պահպանման տեսանկյունից:

Ավետիք Իսահակյանի դիրքորոշումը ազգային խնդիրների վերաբերյալ, ինչպես նաև նրա զգուշացումները արտաքին ուժերի շահադիտական քաղաքականության շուրջ շարունակում են մնալ արդիական անվտանգության տեսանկյունից, մասնավորապես՝ ազգային խնդիրների ընկալման և արձագանքի վերլուծության համատեքստում:

Ուսումնասիրությունը հաստատում է, որ Ավետիք Իսահակյանի նամակագրությունը պետք է դիտարկել ոչ միայն գրական, այլև ազգային մտածողության, պատմական արդարության, ինքնության պահպանման և գաղափարախոսության ձևավորման համատեքստում, ինչը շարունակաբար պահանջում է գիտական, կրթական և հանրային ուշադրություն:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. **Ավետիսյան Ա.**, Ավետիք Իսահակյանի նամակները, Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2016, 474 էջ:
2. **Ինճիկյան Ա.**, Ավետիք Իսահակյանի «Հիշատակարանը» // Պատմա-բանասիրական հանդես, Երևան, 1977, հ.2, էջ 99-104:
3. **Իսահակյան Ավետիք**, Երկերի լիակատար ժողովածու 14 հատորով, հ. 13-րդ: Նամակներ (1889-1923), Երևան, «Էդիթ Պրինտ» հրատարակչություն, 2020, 720 էջ:
4. **Իսահակյան Ավետիք**, Երկերի լիակատար ժողովածու 14 հատորով, հ. 14-րդ: Նամակներ (1924-1957), Երևան, «Էդիթ Պրինտ» հրատարակչություն, 2021, 1136 էջ:

5. **Իսահակյան Ավետիք**, Ղարաբաղեան գրառումներ // Բագին, Պէյրութ, 1990, Թիւ 9-12, 242 էջ:
6. **Իսահակյան Ավիկ**, Ավետիք Իսահակյանը և հայկական հարցը // Գրականագիտական հանդես, 2004, թիվ 2, էջ 160-164:
7. **Իսահակյան Ավիկ**, Ավետիք Իսահակյան.գիտական կենսագրություն: Գիրք առաջին, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2000, 601 էջ:
8. **Իսահակյան Վ.**, Հայրս, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2000 թ., 590 էջ:
9. **Կապուտիկյան Ս.**, Էջեր փակ գգրոցներից, Երևան, «Ապոլոն», 1997, 686 էջ:
10. **Կարապետյան Բ.**, Արցախյան գոյամարտի համահավաք, գիրք երրորդ, Երևան, «Շուշի» հրատ., 2009, 240 էջ:
11. **Տուրիշչևա Օ.**, Արտասահմանյան գրականագիտության տեսությունը և մեթոդաբանությունը: Ուսումնական ձեռնարկ, Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2017, 264 էջ:

REFERENCES

1. **Avetisyan A.**, Avetik Isahakyan'i namaknery [Avetik Isahakyan's Letters], Yerevan, Yerevani Petakan Hamalsarani hrat. [Yerevan State University Press], 2016, 474 p.
2. **Inchikyan A.**, Avetik Isahakyan'i "Hishatakarany" [Avetik Isahakyan's "Memoir"] // Patma-banasirakan handes [Historical-Philological Journal], Yerevan, 1977, no. 2, pp. 99–104.
3. **Isahakyan Avetik**, Erkeri liakatar zhoghovatsu 14 hatorov, h. 13-rd. Namakner (1889–1923) [Complete Works in 14 Volumes, Vol. 13: Letters (1889–1923)], Yerevan, "Edit Print" hrat., 2020, 720 p.
4. **Isahakyan Avetik**, Erkeri liakatar zhoghovatsu 14 hatorov, h. 14-rd. Namakner (1924–1957) [Complete Works in 14 Volumes, Vol. 14: Letters (1924–1957)], Yerevan, "Edit Print" hrat., 2021, 1136 p.
5. **Isahakyan Avetik**, Gharabaghean grarumner [Karabakh Notes] // Bagin, Beirut, 1990, no. 9–12, 242 p.
6. **Isahakyan Avik**, Avetik Isahakanyan yev haykakan harcy [Avetik Isahakyan and the Armenian Question] // Grakanagitakan handes [Literary Studies Journal], 2004, no. 2, pp. 160–164.

7. **Isahakyan Avik**, *Avetik Isahakyan: gitakan kensagrut'yun. Girq arajin* [Avetik Isahakyan: A Scholarly Biography. Book One], Yerevan, HH GAA "Gitut'yun" hrat. [NAS RA "Science" Publishing House], 2000, 601 p.
8. **Isahakyan V.**, *Hayrs* [My Father], Yerevan, HH GAA "Gitut'yun" hrat. [NAS RA "Science" Publishing House], 2000, 590 p.
9. **Kaputikyan S.**, *Ejer pak gzrots'nerits'* [Pages from Closed Drawers], Yerevan, "Apollon" hrat., 1997, 686 p.
10. **Karapetyan B.**, Artsakhyan goyamarti hamahavak, girk' yerrord [Collected Works on the Artsakh War, Volume Three]. Yerevan: "Shushi" Publishing House. 2009, 240 p.
11. **Turishcheva O.**, *Artasahmanyany grakanagitut'yan tesutyuny yev metodabanut'yuny: Usumnakan dzernarg* [Theory and Methodology of Foreign Literary Criticism: A Textbook], Yerevan, Yerevani Petakan Hamalsarani hrat. [Yerevan State University Press], 2017, 264 p.